

Արձանագրություն թիվ 2

2021 թվականի փետրվարի 8-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ <<Բ>> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Լ. Աղաբաբյանը, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զ. Գևորգյանը:

Օրակարգում

1. 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում:
2. 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները:
3. Ընթացիկ հարցեր(կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին- . 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփման հարցը:

1. Ելույթ ունեցավ դասղեկ Լ. Աղաբաբյանը՝ մեկ առ մեկ ներկայացնելով առարկաները և գնահատականները: Նա նշեց, որ 1-ին կիսամյակում դասարանում կան գերազանցիկ

1. Բաղայան Լուսինե
2. Բաղայան մերի
3. Պետրոսյան Անի

Կան 6 ուսման առաջավորներ.

Չկան չառաջադիմող աշակերտներ:Դասարանի առաջադիմությունը 100%, որակական ցուցանիշը 45%: Բացակայությունը կազմել է 3 ժամ:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր և գրենական պիտույքներ, օգնել հետ մնացող աշակերտներին:

2.Լսեցին.- 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները:

Ելույթ ունեցավ դասղեկ Լ. Աղաբաբյանը, ով ներկայացրեց 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում 10-րդ <<Բ >> դասարանի կատարած աշխատանքները և ներկայացրեց նոր՝ 2- րդ կիսամյակի անելիքներն ու խնդիրները: Լ. Աղաբաբյանը առաջարկեց 2-րդ կիսամյակում մեծ ուշադրություն դարձնել կարգապահությանն ու առաջադիմությանը՝ շտկելով նախորդ կիսամյակի սխալները և բացթողումները: Դասղեկ Լ. Աղաբաբյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների

առաջադիմության հիմնախնդիրների հարցում: Պատեկը հորդորեց ծնողներին սերտ կապ պահպանել ուսուցիչների և դպրոցի հետ, ինչը կխթանի սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը ճիշտ ու արդյունավետ կազմակերպելուն: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքները, լավ պահել, պահպանել դասագրքերը, մասնավորապես չկորցնել դրանք:



Որոշեցին.- Ծնողները խոստացան հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հաճախակի այցելել դպրոց, կապ հաստատել ուսուցիչների, դասղեկի, տնօրենի հետ:

3.Լսեցին.-Անթացիկ հարցեր/կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Պատեկ Լ. Աղաբաբյանը նշեց ,որ 2-րդ կիսամյակում ևս դպրոցը աշխատելու է վեցօրյա ռեժիմով /9-00--13-55/: Նա հորդորեց ծնողներին հետևել, որ իրենց երեխաներն հավուր պատշաճի հաճախեն դպրոց: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավելագույնս ուշադիր լինել նրանց հաճախումներին, դասերին պատրաստվածությանը և աշակերտավայել կարգապահությանը:

Ծնողական խորհրդի նախագահ՝  Ար. Հարությունյան
Քարտուղար՝  Ն. Ավագյան